

կարգիչ Հովվապետեն, եռամեծ Ս. Վարդապետեն:

Հանգույցյալ երանաշնորհ Հայրապետը իրավամբ կրնա Պողոս առաքյալին հետ ըսել. «Զբարտ պատերազմ պատերազմեցալ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսունետե կալ մնալ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր

Կարեւոր խոցված սիրտով կուգանք մեր բեմի հայրենակարոտ հայության կողմն մեր ցավակցությունները հայտնելու Մայր Աթոռ սգակիր ու վշտակիր միաբանության:

Եվ ի խորոց սրտի կաղոթենք, որ բարությանց Տերը երջանկահիշատակ Հայրապետի հոգին «հանգուցանէ ի լոյս երեսաց իւրոց,



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԴՈՒՄ

յայնմիկ (Պողոսի Բ բուրբ առ Տիմոթ., Գ 7—8): Տարակույսե վեր է, քե երջանկահիշատակ Հայրապետը քաջությամբ մղեց հավատի պատերազմը, իր կյանքի ընթացքը մեծ վաստակով ավարտեց, իր պարտքը լիովին վճարեց հայ ժողովուրդին, և ասկէ վերջ արժանի է փառաց պսակին:

դասաւորելով զնա ընդ սրբազան հայրապետսն Եկեղեցոյ իւրում սրբոյ, յարժանութեան երկնից», և մխիթարե ուրացած և սգավոր Հայ Եկեղեցին, ու կմաղթենք, որ Նղիայի մաշկյակը իջնե Նղիսեի վրա, և Աստուծոյ արժանավոր հաջորդ մը բազմեցնե Լուսավորչի Ս. Արքովին վրա:

ՎԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՃՅԱՆ

(Առաջնորդ Ռումանայի բեմի)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈՒ ԵՆՓՈՒՄԻՆԵԼԻ ԿՈՐՈՒՄՏԸ

Ծանր է մեր սուգը, խոր է մեր վիշտը, անփոխարինելի է մեր կորուստը: Մեր սիրեցյալ Հայրապետը՝ Ամենայն Հայոց մեծագործ և հայրենակներ Կաթողիկոս Գեորգ Զ. ը ոչ ևս է մեր մեջ:

Դժվար է, շատ դժվար հաշտվիլ այն մըտին հետ, քե այլևս չունինք զԲՆԲ իբրև Գերագույն Պետ և Առաջնորդ, մահավանդ մեր Եկեղեցվո համար տագնապներով ու մեղ

տանջող հարցերով լեցուն այս օրերուն, խռովահույզ աշխարհի մը մեջ:

Ինչպե՞ս պիտի հալի կապարը մեր սրտերուն:

Բայց մենք սուրբ հավատք մը ունինք: Ինչպես բնության ծոցին մեջ, նույնպես և բարոյական-հոգեկան աշխարհի մեջ ոչինչ չի կորսվիր: Մենք բարոյական իրականություններու, հոգեկան արժեքներու աշխարհ մը կղավանինք. կապրինք այդ աշխարհին

նորդել նաև այսուհետև, մեր երանելի Լուսավորիչներու և Շնորհալիներու շունչով. ամենց ստեղծած հազարամյա հոգեկան արժեքներու լույսով:

Մեր Փրկչին և Տիրոջը Ս. Հարություն շնորհներովը զեղուն սա օրերուն, որպես փաղր և հույժ մխիթարական ու կենարար խոսք, կլսենք պատգամը մահվամբ մահը հաղթող Աստվածորդվույն՝ «Ո՛չ բողից զձեզ որբս, զամ առ ձեզ», պատգամ մը, որ մեզ



ԳԻՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԱՅԱՆԸ ԴԱՄԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԴԻՆՍ

ԵՐԵՎԱՆ

մեջ, կապրինք այդ աշխարհով: Այդ աշխարհը մեր սուրբ հավատքին կրակով, մեր լուսաբնակ նախնյաց հանճարով կուտակված արժեքներու գանձարանն է, զոր ոչ ոք կրնա հափշտակել մեզմե:

Մեր մեծ Հայրապետը, որ Իր աշխարհը հավետ փակելով անցավ դեպի մյուս ափը կյանքին, մեզմե կբաժնվի մարմնապես, որպեսզի «զայ առ մեզ» և բաշխվի մեզ բոլորիս հոգեպես, ու շարունակե զմեզ առաջ-

կթողու նաև ի Տեր հանգուցյալ մեր մեծ Քահանայապետը:

Ուխտե՛նք հավատարիմ մնալ Իր հիշատակին, ուխտե՛նք, հավատարիմ մնալ Իր սուրբ գործին, ուխտե՛նք հավատարիմ մնալ Սրբություն Սրբոց Մայր Էջմիածնին, ուխտե՛նք հավատարիմ մնալ մեր ժողովուրդին ու մեր վերընձյուղած Մայր Հայրենիքին:

Խաղաղություն և լույս՝ երջանկանիշատակ Դեռզ Զ. Հայրապետի արդար հոգվույն: